№ 87 Մայիսի 15 (27) 1881 Մայիսի 15 (27) № 87

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուլ. կէս տարեմեջ 6 բուլ.
Առանձին համարները 5 կոպեկով

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ.

Ձեռագրագրողներին տրվում են ազատակի

Редакторъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ինչում:

Յայտարարութիւնների համար գնվորում են խրատակոչիր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Աթաբեկյանից։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Թիւրքիայ Ցուցանակ. Ֆրանսիայ Անգլիայ Խորհրդ Նամակ նամակաց. Ազատ Անգլիայ Խորհրդ Նամակ թիւրքիայից։ Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳՐԻՆԵՐ.—ՑՈՒՑԱԿԱՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Աշխարհիս երեսին մեծ մարդ գտանելու համար, ի հարկէ, պէտք է ունենալ կարգից դուրս ընդունակութիւններ, տաղանդ, մինչեւ անգամ հանճար, նոյնպէս անհրաժեշտ է ունենալ և մեծ աշխատասիրութիւն։

Բայց մեծ ասված մարդկանց մէջ, այնու ամենայնիւ կան երկու տեսակ մարդիկ։

Առաջին տեսակին պատկանողը մեծ, երեւելի մարդ գտանելու համար, ընտրում է ամենադիւրին ճանապարհ,—այն է ընթանալ հասարակութեան և մարդկութեան հետ, ժամանակից, պատրիոտ մեղ թողված ոգու և հասարական կարգերի եռեւից։ Նա օգուտ է քաղում ժամանակիցների գլխաւոր այժերից, շաղխվում է առանձին երկրի կամ ամբողջ մարդկութեան մէջ տիրող ժամանակից գլխաւոր տրամադրութեանից և ոգուց։ Նա ընթանում է մեծամասնութեան հետ, ձայնակցում է նրան, օգուտ է քաղում նրանից և վերջը, իր տաղանդի շնորհով, գտանում է մեծամասնութեան արտայայտիչ, նրա առաջնորդ, նրա պատգամաւոր։ Այդ տեսակ մարդիկ պատկանում են պատմական կուսակցութեանը։

Այդ տեսակ մարդկանց թիւն էր պատկանում Հանգուցեալ լորդ Բիկոնսֆիլդ, որ իր ճարպիկութեամբ գտնում անդրկանց տօրի ասված պատմական կուսակցութեան պատգամաւոր։

Միւս տեսակ մեծ, կամ երեւելի մարդկանց գործը աւելի դժուար է, պահանջում է աւելի ինքնուրոյնութիւն, համարձակութիւն, բնաւորութեան զօրութիւն, տոկունութիւն և եռանդ, վերջապէս և աւելի խելք և մտաւոր զարգացում։ Գրանք ազատամիտ կամ առաջադէմ մարդիկ են։ Այդ ուղղութեան մէջ մեծ մարդ գտանելու համար պէտք է կուռել եղած գրութեան դէմ, ճանաչված կարգերի և օրէնքների դէմ, մաքառել շատ անգամ հետեւեալն և նախապաշարմունքների դէմ, առաջարկել նոր հասարական կամ բարոյական ձեւեր, ծրագրեր, փորձառութիւններ... Այդ տեսակ ուղղութեան ուռնեցողները, պատիւն ազգայի մարդիկ, ամեն հասարակութեան և ամբողջ մարդկութեան մէջ միշտ փոքրամասնութիւն են կազմում, այդ պատճառով մեծ մարդ գտանելու առաջադէմներ, փոքրամասնութիւն կազմող շրջանից դուրս դալով միշտ աւելի դժուար է, քան թէ մեծ մարդ գտանել պահպանողական մեծամասնութեան հասնելի եւ հեշտ ընթանալով։

Երկրորդ ուղղութեան ժամանակից կուսակցութիւնը Անգլիայում ազատամիտ, վիգ է։ Ինչպէս ասվեցաւ, նա երկրորդ տեսակի երեւելի մարդը Անգլիայում դարձած է։

Պահպանողականների պարագլուխ գտանել և հռչակել մեծ մարդ, փոքր ի շատ տաղանդ ունենալ, աւելի հեշտ է, քան թէ մեծ տաղանդ, հանճար եւ լինելով գտանել փոքրամասնութեան պարագլուխ.... իսկ աւելի եւ դժուար է ստեղծել մի նոր կուսակցութիւն։

Պահպանողականը ժամանակի մարդ է, ներկայ հասարական, կենցաղի պահանջի, մեծամասնութեան արտայայտիչ է։ Իսկ առաջադէմ, կամ ազատամիտ կուսակցութիւնների մարդիկ՝ ապագայ գաղափարի մարդիկ են։

Անգլիայում տիրում է մեծ ազատութիւն, բայց չը կայ հաւասարութիւն։ Անգլիան մի արիստոկրատական հանրապետութիւն է, որտեղ ամեն անտեսական, հասարական, նիւթական, բարոյական և մտաւոր այժ՝ յայտնի դասակարգերի արտօնութիւն է։ Այդ դասակարգերն են ժառանգական արիստոկրատիա, փողի արիստոկրատիա և կղերական դաս, անգլիական եկեղեցի....

Հոգերը լորդերի ձեռքումն են,—ժողովուրդը չուներ հոգեր։ Ուստմբ մտայնի է հարաւաններին և կազմում է նրանց պատգամաւորութիւն,—ամբոխը տգէտ է։ Ոչ մի տեղ չը կան այնքան մեծ հարաւորութիւններ, որքան Անգլիայում։—և ոչ մի տեղ ազատութիւնը այն տատիճան սարսափելի չէ, որքան Անգլիայում։ Անգլիական եկեղեցին ամենազազատամիտ, ներդաշնակ, բարոյականացնող եկեղեցի է ունեցողների, գիտնականների և անուանի մարդկանց համար,—և մի և նոյն ժամանակ սարսափելի ճշնդող, սարսեցնող, բեռացնող է, խոր ազատութեան մէջ պահող է սոցրէն ժողովրդի համար։ Օրէնսդրութիւնը նպաստող է պատմութեան ունեցող դասակարգերին,—և զրկող է ամբոխի վերաբերութեամբ։

Արիստոկրատիայի, արտօնացած դասակարգերի և պետական եկեղեցու տիրապետութիւնը ի վնաս ամբոխի,—ահա Անգլիայի պատկերը։ Ցեռեանան, մտաւոր, օրէնական, բարոյական արտօնութիւններ մի քանի դասակարգերի ի վնաս ժողովրդի,—ահա տօրէների նշանաբանը, նրանց զրօսաշրջանը։ Պահպանել այն բոլորը ինչ որ կայ, ինչ որ ժառանգել է ազգը իր պապերից, պահպանել բոլորը ինչպէս որ կայ, առանց որ և է փոփոխութեան,—սա է տօրէների սա էր Բիկոնսֆիլդի նպատակը։

Պահպանողականները որ և է զիջումն են անում միայն անհրաժեշտութիւնից ստիպված։ Տօրէները էին, որոնք պաշտպանում էին կարգամատեր լորդերի իրաւունքները հոգեր։ Պահպանել այն բոլորը ինչ որ կայ, ինչ որ ժառանգել է ազգը իր պապերից, պահպանել բոլորը ինչպէս որ կայ, առանց որ և է փոփոխութեան,—սա է տօրէների, որ և է զիջումն են անում միայն անհրաժեշտութիւնից ստիպված։ Տօրէները էին, որոնք պաշտպանում էին կարգամատեր լորդերի իրաւունքները հոգեր։ Պահպանել այն բոլորը ինչ որ կայ, ինչ որ ժառանգել է ազգը իր պապերից, պահպանել բոլորը ինչպէս որ կայ, առանց որ և է փոփոխութեան,—սա է տօրէների, որոնք ամբոխի ազգայի մարդիկ, ամեն հասարակութեան և ամբողջ մարդկութեան մէջ միշտ փոքրամասնութիւն են կազմում, այդ պատճառով մեծ մարդ գտանելու առաջադէմներ, փոքրամասնութիւն կազմող շրջանից դուրս դալով միշտ աւելի դժուար է, քան թէ մեծ մարդ գտանել պահպանողական մեծամասնութեան հասնելի եւ հեշտ ընթանալով։

Երկրորդ ուղղութեան ժամանակից կուսակցութիւնը Անգլիայում ազատամիտ, ամբոխը իր միակ ազատ օրը իրաւունք չունենալ ոչ թատրոն գնալ, ոչ երաժշտութիւն լսել, ոչ մուզիկներ յամնեել, վերջապէս միջոց չունենալ մտաւորապէս և բարոյական զարգանալ։ Իսկ գիտնականները և հասարակ անները բաց են կիրակի օրը և ժողովրդը կարող է հարքել և անբարոյական լինել սորը օրը։

Արտաքին քաղաքականութեան մէջ տօրէները հետեւում էին միշտ և հետեւում են բաղդանդիր քաղաքականութեանը, ապարդիւն և հետաւոր պատեազմներին՝ գուլտաների, բոէրների, հնդկացիների հետ և այլն, այդպիսով շղթաբերելով անգլիական ազգի փառքի զգացմունքին։

Տօրէների նշանաբանն է արտօնութիւններ մի քանի դասակարգերի, ներքին կեանքի մէջ ձգտում ամրոխի վրա, իսկ արտաքին քաղաքականութեան մէջ փայլ և փառ։ Ահա այդ կուսակցութեան պարագլուխն էր Բիկոնսֆիլդ։

Վիգերը հակառակներ են այդ կուսակցութեան։ Թշնամի արտօնութիւնների, բարեկամ խաղաղութեան, պաշտպան հաւասարութեան և թշնամի բաղդանդիր քաղաքականութեան։

Նրանք մաքառողներ են հետեւեալ դէմ, ընդհանուր հոգեաքի ընդդէմ գնացողներ են, ազատայ դաղափարի մարդիկ են։

Այդ յարգելի և համակրական կուսակցութեան պարագլուխը՝ Գլադստոնն է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՑ

Մայիսի. 8-ին

Օրեբուսն եկաւ այստեղ Ժողովի կրկէսի (գիրկի) խումբը։ Ամսոյս 1-ին տուից առաջին ներկայացումը, որ լիքն էր հանդիսականներով։ Սովորաբար Անգլիայի նման զուտասական քաղաքում այդպիսի զուարճալի տեսարանները մեծ նշանակութիւն ունեն ժողովրդեան վրա։ Ուստի ժողովրդը մեծ ուրախութեամբ յանձնում է այդ ներկայացման։ Վատ չէր լինի, որ մի լիքեր խումբը իր միանգամից ներկայացման զոյացած օգուտը ծառայեցներ մի որ և է օգտակար բանի մեր քաղաքի, ինչպէս այդ անում են ուրիշ քաղաքներում։ Ցանկանում ենք, որ մեր երիտասարդ սիրողները ներկայացումներ տան օրերուն, որոնք մեր հայ հասարակութեանը մեծ օգուտ կարող են տալ, քան ցիրկը յանձնել։

Անգլիայի մի երիտասարդ պարոն բաց արեց Եգիպտոյի ճանապարհ մի սրճատուն, որտեղ գտնվում են և զանազան տեսակ զուարճալի խաղեր—լոտո, նարդի, գոմնոս և այլն։ Տեղացու երիտասարդներից ոմանք կամենալով այս սրճատունը մի զուարճութեան հետ միացնել նաեւ օգտակարութիւնը, հանդանակութեամբ փող վերցնելու և այդ սրճատան համար տասան հետեւեալ լրագիրները—«Ուշակ», «Մեղու», «Փարոս», «Փարատ», «Աւարատ», «Всеобщая газета» և «Нива»։ Լրագրեր կարող է գնալ ամեն օր և կարգալ լրագիրներ առանց բաժանորդ գրվելու։ Ցանկանում եմ միւս գրիչներնեն և կամենալ հայ երիտասարդներին յանձնել այդտեղ, և փոխանակ դատարկաբար փողոցներում ման գալու, կամ կրուներում թղթախաղով պարապելու, լրագիրներ կարդալ, խօսել, դատողութիւններ անել։ Յուսով ենք, որ այդ օգտակար գործը մի և նոյն ուղղութեամբ չարունակվում է և գեղեցուներ չեն լինի։

Վերջին ժամանակներումս հետզհետէ ուեւառնում է գլիգորեան-հայոց օրիորդաց ուսումնարանում կամենալի օրիորդների թիւը. լաւ կը լինէր, որ ուսումնարանի յարգելի հոգաբարձուները վարձէր մի կիսնուսոյց քահանայ, որով կը փարատվէր ժողովրդի մէջից մեր մի քահանայի տարածած գաղափարը, թէ մեր օրիորդները հայկական ուսումնարանում հերետիկոս են դառնում։

Աթաբեյեանում մի սովորութիւն է մնացել կարծոյ գաղթականաց մէջ մինչեւ այսօր էլ, այն է պարտաքարով կուռելը, ինչպէս թիֆլիսի մուշակ կոչիր։ Գաղթականներն առաջին տարիներում պարտաքարով կռվում էին հասարակաց տեղերում բուն վրայի և թուրք բնակիչների հետ։ Այդ կռվից է, որ մինչեւ այսօր էլ տաներիսների մէջ մնացել է մի առած հայերի մասին.—Գէվորգն հերթք հերթքի օրմասյաքի, զարկէք զարկէք ասում էզսյունուրդ։—(հային հերթքը եթէ չը լինի, զարկէք զարկէքը մարդ է սպանում)։ Այդ սովորութիւնը հետզհետէ անհետանալով, այժմս մնացել է միայն ոտպոց մէջ։ Կիրակի օրերը հաւաքվում են մի թաղի տղայք և գնում են միւս թաղեցոց վրա պարտաքարով կռիւ անելու։ անցեալ ամսում այդ տեսակ կռիւներից մէկում մի 19 տարեկան պատանի զոհ գնաց պարտաքարի մի հարված կրելուց։ Այդ անգրագիտ երկու որ նաբը հին քաղաքացի մի հայ-կաթոլիկ ընչերկան գեղջ ունեցաց և խեղդվեցաւ, անցոյզ մի օրից հաբը հարբ գանվեցաւ Նրա դիակը։

Անցեալ նամակումս յիշել էի տէր Ց. Զ.-եանց հոր մասին. վերջապէս նա հասաւ իր ցանկացած պաշտօնին։ Անցեալ նամակումս յարձակողական դիրք էի բռնել նորա մասին, ոչ այն մտքով, որ նրան թշնամութիւն անեմ, այլ՝ որ նա հեռի մնայ իր առաջվայ թերութիւններից։ Անցեալ տարում գրիգորեան և կաթոլիկ հայ երիտասարդները մտադիր էին ներկայացում տալ յօգուտ հայ-կաթոլիկաց ուսումնարանի, բայց չը յաջողվեցաւ։ Խորհուրդ եմ տալիս արժանապատիւ տէր հօրը, որ նա այս տարի արդարանալու առաջ տանել այդ ազգօգուտ գործը, որով նա մեծ բարեգործութիւն արած է հանդիսանում մեր ապագայ սերնդին և ժողովրդի համար։ Գործը ուշացութիւնը վայելում է։ Ահա այս պիտի լինէր նրա առաջին գործը և ոչ թէ 12 տարվայ նարդաման ծառայոյ ժամանակին ապաստիր։

Ներկայ ժամանակներումս գրիգորեան-հայերի մէջ մեծ խռովութիւն կայ. լսում ենք, որ ս. Էջմիածնից երկու տարի է սեփականացրել է ս. Գրիգոր Լուսաւորչի սեփական գիւղերը. այդ մասին տեղացոյս առաջնորդը ամենեին չէ մտածում, նա բարոյապէս ուրիշ գործերով է զբաղված. նա ոչ քաղաքացոյ կոյին է և ոչ Էջմիածնայ։

Նեղանկար այստեղ չատ լաւ է. այս տարի բոլորը մեծ առատութիւն են խոստանում. ներքին մթերքների գներ հետզհետէ էժանանում են։ Առատութիւն չատ սաղ է. գրվիկների լաթերից էլ յոյսերս կորեցինք. թէպէտ նոր քաղաքապետը օրերումս եկաւ. թիֆլիս, որ գրվիկների լաթերը փոխանակ Աթաբեկեանի Ա. խաղցեկայում լինի, բայց չը յաջողվեցաւ. այժմս տեղացոյս խանութպանները կրպակների դռներին կանգնած երկնքից մանանայ են սպասում

Հայ-Հասան